



# ԲԱԶՄԱՎԷՊ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 9 .

1851

ՄԱՅԻՍԻ 1 .

ՆԵՐՐՈՂԵԱՆ

ՅԵՐԶԱՆԻՆ ՆԱԽԱՀԱՅՐ

ՈՒԽՏԻՍ

Ի ՄԵԾՆ ԵՒ Ի ԼՈՒՍԱՆՈՐՈԳ ՄԽԻԹԱՐ

Ետո զսիրելիս անձին իմոյ 'ի հարուստս .

ԵՍԱՅԻ

ԲԱՐԻ, և զհարգ դժուարալուր բան յաստուածեղէն գրոցն ուսեալ, և ստիպիմ առաջի առնել մեծարգոյ ժողովոյս 'ի սերկեանս աւուր, ո՛ր աստուածաբեալ վարդապետք, հարք իմ և եղբարք պատուականք, զհարգ հանդուրժեմ 'ի տարեկան հանդիսիս զտեառնապարգև խնդութիւնդ ձեր յարտասուս փոխել, ընդ հօտապետին Վրիստոսի հրաւեր կարդալով զի յաշխարհայնոցն խնդալ դուք տրտմեցիք և լացիք, և զի արտասուք են այսոքիկ պարգևքերկնայինք, տրիտուրք ճգանց ձերոց և վաստակոց, հարիւրապատիկ դարձուածք փոխարի-

նաց զի զաշխարհ թողէք և զհայրենին տուն, և զի նշանք են սոքա յայտարարք Լստուծոյ սիրոյն, որով Վրիստոսի հաւատք յանհնարիցն զհնարաւորս վերբերեն, յարտասուաց զխնդութիւն ծորեցուցանեն և 'ի վշտաց զսիրելութիւն . Լ՛հ, դժուարին էր ապաքեն շաւիղս, անգնալի և ճանապարհս, եթէ ոչ եկեղեցւոյ սրբոյ՝ առաջնորդս անմոլարս բան զաշտարակս լուսաւորիչս ալեկոծ ծովուց և գիշերական խաւարի, զերջանիկ ընտրելոցն էր թողեալ գումար, որք հատեալ անցին զփրկութեանն ուղի, հետս իմն զերկնադնաց ճանապար-



հացն ցուցանելով մեզ 'ի միութարութիւն : Նոցա ձայն բարբառոյ զմարտադիրսն խրախուսէ , զվշտագնեալն սփոփէ , վտարանդի հալածելոյ զերկինս ցուցանէ հայրենիս , զգերեալն ազատաքայլ ճեմեցուցանէ , պակասելոյն 'ի շնչոյ՝ այլ շունչ զճիսուսին ազգէ , և յապականացու մարմնոյ անապական 'ի վերամբառնայ կենդանութիւն : Օ միոյ 'ի նոցանէ առաջի կայ ինձ ցուցանել ժողովոցս զհանդէս լաւութեան , ոչ որ 'ի գերցս պրկիցի տանջանաց , ընդ սուր անցցէ և ընդ հուր , այլ նահատակ մի լստուծոյ սիրոյն և ազգին . նահատակ՝ յլստուծոյ սիրեցեալ վշտօք , և յաշխարհէ ատեցեալ չարչարանօք , յերկնից թողեալ և 'ի մարդկանէ անարգեալ , զմեծն ասեմ զՄԻԹԱՐ , զհայր մեր և զհայր Հայաստանեայց . զարժանին շառաւել եղեմական տնկոց , և զլուսանորոգն սերունդ հնոցն պայծառանշուլ լուսաւորչաց . զմեռեալ սիրոյն լստուծոյ և ազգին , և երկոքումբք յանմահութիւն անդր կրկին ծնեալ : Եւ կարի յիրաւունս . զի ՄԻԹԱՐ արտասուեաց , և երկիրս մեր հայրենի զինդութիւն զգեցաւ . ՄԻԹԱՐ հառաչեաց , և Հայաստան զուարթացաւ... լսպէս աշխարհի բարութիւնք տնօրինեալ կազմին , այսպէս և արք հոյակապք 'ի հողածնաց 'ի վեր երեւին :

Հապա , տուք ինձ խրախոյս , եղբարք , զնահատակն լստուծոյ և ազգին ոչ պաճուճանաց ներբողել բանիւք , այլ 'ի քաջալեր խրախուսանաց աստուածախումբ ժողովոյս ածել կացուցանել 'ի մէջ , և հօրն օրինակաւ զորդեկացն գումար սփոփել , նորա վշտօք զմերսն մոռացուցանել , և նորա ջանիւքն զանձինս ամրապնդել . լինել նահատակ լստուծոյ և նահատակ ազգին , և լինել աշակերտ ՄԻԹԱՐայ . քանզի և յայս իսկ 'ի պարտուց պաշտամանս հրաւիրեցաք , յայս և 'ի տեառնէ կոչեցաք , յայս և 'ի հօրէս անուանեցաք :

Ա.

ԼՍՏՈՒԾՈՅ անքնին նախախնամող ձեռացն զարմանալիք են , եղբարք , մեծի և կարեւոր գործոյ անդնդալիւր հիմունս զվիշտան ձգել և զտառապանս , և 'ի վերայ նոցա շինածս կառուցանել զարմանահրաշս և պակուցանողս , որք զամենարուեստ ձեռին բարձրաձայն զմեծ զօրութիւն քարոզիցեն . հարկանել տա պալել զունայնութեան խորհուրդս մահկանացուաց , և 'ի վերայ աւերակաց նոցա զիւրոց սքանչելեացն ցուցանել զհանդէս . զոչինչսն 'ի ձեռն առեալ և զէսն ամաչեցուցանել , և տկարան և նուաստիւ զգոռոզացելոյն բարձրամիտ ամբարտաւանութիւն յաղթահարեալ կործանել : Եւ այնչափ իմն կարեւոր զայս գործ լստուծոյ յառաջատես գիտութիւնն համարէր , զի որ յանպարագիրն և յանմատոյց ծածկէր լոյս աստուածութեան , 'ի մերկանալ անդ զգերահրաշն պատմութեան , զաղքատինն արկանէր զանձամբ գրգռեալ , յերկնից 'ի խանձարուրս , 'ի խանձարոց յօտարութիւն , և անտի յանապատ , յանապատէն 'ի լերինս , անտի 'ի խաչ , ուստի յերկինս վերելքն նորա եղեն . և այնպէս զանձն իւր բոլորանուէր ողջակէզ հանեալ լստուծոյ արդարութեան և անարդար չարութեան մարդոյ և դիւախրոխտն վայրենի կատաղութեան յաստուածայինն իւր սէր անհետ սուղանէր զչարութիւնն մարդկային , և յերկրաւոր կայիցս զնոսա փոխադրեալ , երկնաքաղաքացիս յարդարէր , 'ի նոցանէ սիրելիս և բարեկամն անձին իւրոյ ընտրէր : Եւ այց լստուծոյ սիրոյն՝ այլ իմն կերպարանք են անհասք 'ի մարդկեղէն խորհրդոյ . սէր՝ որ ոչ 'ի վշտաց զերծուցանէ կամ 'ի ձիւնաբերից անձկութեանց փրկէ , այլ որ ամրապնդ և հաստատուն զսիրտս յարդարէ գեր 'ի վերոյ տառապանացն հանդիսանալ . քանզի ոչ վարկպարագի իմն մուտս գործէ ՎՐԽՍՏՈՍ , այլ խաչ 'ի յուս բարձեալ և այնպէս 'ի համբոյր միաբանութեան ընդ սիրե-



լեացն գայ . անդր առեալ ածէ և զփուշ-  
սըն խոցոտիչս աստուածային զլիպն . զի  
կրկնակի բաժինք են պարգևացն նորա .  
նախ խաչն և ապա թէ գահոյք արքու-  
նականք , խոնարհել 'ի ստրկութիւն ծա-  
ռայութեան , և յետ այնորիկ թագա-  
ւորութիւն . մահու չափ նուաստանալ ,  
և ապա փառօք 'ի վեր ամբառնալ :  
( Օտյն զայս շաւիղ ամենատէրն հատա-  
նէր 'ի վերայ երկրի , և յօրհասին մեր-  
ձենալ զայն խրատ իւրոց սիրելեացն  
տայր . պատուէր 'ի վերայ դնէր նոցա ,  
ընթանալ ընդ ծագս աշխարհաց , լսելի  
առնել զհրամանս պատգամացն իւրոց 'ի  
հրապարակս և 'ի վերայ տանեաց , օ-  
ժանդակ յերևելեացս ոչ այլ ինչ ցուցա-  
նելով նոցա , բայց որով ինքն վարեցաւ ,  
զհաւատոցն և զառ Մատուած սիրոյն  
ըստ լուսաւոր 'ի ձեռս տուեալ նոցա :  
Եւ յաւաքիմ ապաքէն , զի և յերկրաւո-  
րացս էր ինչ զոր մատուցանէր նոցա յօգ-  
նականութիւն . կանխաձայն գուշակէր  
նոցա անդէն 'ի պահու խորհրդական  
ընթերեացն եթէ աշակերտին յանհա-  
րիցն է մեծ քան զվարդապետն լինել .  
և զի « Եթէ զիս հալածեցին , ապա  
և զձեզ հալածեսցեն » : ( Յառաջագոյն  
պատմէր Վրիստոս եթէ գթուարակոխ  
շաւիղն էր յոր զնոսա առեալ մոծա-  
նէր , զի անձուկ և փշալից է ուղին ա-  
ռաքելութեան , ընդ որ համարձակ Մ-  
տուած միայն կարէր ընթանալ և սէրն  
նորա :

Վրիստոսի հաւատոցն վշտօք ծա-  
գուծն լինէր , և հալածանօք յառաջա-  
դէմ ընթանայր . յայնժամ իբրև զերամս  
աղանեսաց թուէին վերանային միտք  
երկնաբաղձք 'ի զիրկս եկեղեցւոյ , յո-  
րումսուսերք բռնաւորաց զնա գձձէին ,  
յորում արինք վտակօրէն հեղեալք  
զպողոտայն ներկանէին և զգաշտս . . . .  
Իսկ յորժամ աշխարհ գայր միջամուտ  
լինել յեկեղեցի , յայնժամ ապա նուա-  
զէր հաւատոցն զօրութիւն : Բայց խը-  
նամբ Մատուածոյ և անտի իսկ ճարտար  
գիտէն ածել կացուցանել 'ի մէջ զար-  
ժանաւորսն սիրոյ իւրեանց և խան-  
դաղատանաց . զի զաշխարհ միւս ան-

գամ յեկեղեցի փոխեսցեն , անտի 'ի  
վեր երևցուցանեն արս նորոգիչս աս-  
տուածային բարեկարգ վայելութեանց .  
զէնս՝ զՎրիստոսի և զառաքելոցն , զվր-  
կայիցն և զմարտիրոսաց արկեալ զան-  
ձամբ նոցա : Եւ լին ամրապինդ զինու-  
ղքաջ սպառազէնն ( ՍԻԹԵՆԻ ԿՈՆՈՎԱՆՈՒՄ  
առեալ , առաքէին զընկուծն բառնալ  
Հայաստան ժողովրդոց . նորոգ կենդա-  
նի առնել զաշխարհն , զոր Մատուածոյ  
ձեռք հարին , և արդ կամէին բժշկել .  
քանզի 'ի նորա իսկ թոյլտուութենէն  
խաւարին ծածկէր մթութիւն , և նորա  
և եթ ողորմութեան գործ էր փարա-  
տել զայն 'ի նմանէ . ձեռաց՝ որ զտա-  
ճարն կործան արկին , արժան էր ըզ-  
( Օրաբաբէլ յարուցանել , և քաջալեր  
բարբառովն զնա խրախուսել : Վիշեր  
էր ցաւագին զոր մահ անմուտ լուսա-  
ւորացն ( Նորհալոյ և Լամբրոնեցւոյ ,  
արագ արագ պատէր զերեսօք մերոյ եր-  
կրին , և աւուրքն զորս՝ Երեսէս կանխա-  
ձայն ողբայր և Խահակ վշտագին ար-  
տասուէր , յետ բազմադարեան աւուրց  
թուէին իմն եկեալ հասեալ : Պակա-  
սեցին փարագունք բնակեալք 'ի մէջ  
( Սորգոմայ , մինչև յարեաւ ( խիթար ,  
մինչև յարեաւ հայր Հայաստանեայց :  
Չայն 'ի նուիրական վիրապէն հնէր ,  
ձայն 'ի միածնաւջ քարանց տաճարացն  
սրբութեան , ձայն 'ի ցանկալի հանգըս-  
տարան շիրմաց երանաշնորհ ( Սարգման  
չացն , ձայն Երիզայ և 'ի Խոշաւանից ,  
'ի Սեպհոյ գաղաթանցն , յանձաւափոր  
կայանացն Սանեայ , զնիրհեալ ողոր-  
մութիւնն Մատուածոյ զարթուցանել ,  
զաղերսականն գոչելով և զփարեղի , եթէ  
« Երի տէր , մինչև ցերք ոչ ողորմեսցիս  
Երուսաղէմի » : Եւ ոչ ոչ երբէք ան-  
լուր եղեն ձայնք բարբառոյ սիրելեացն  
Մատուածոյ . դարձաւ Մատուած յերկիրն ,  
դարձան և գութ խնամոց նորա . հայե-  
ցաւ յերկիր և արբոյց 'ի պարարտու-  
թենէ ցօղոյ երկնից . ելին խոնեցան  
կուտեցան յիշատակաւ առաջի նորա  
վաստակքն բազմադիմիք , բոսոր ա-  
րիւնքն և քրտունք ապաժոյժ հեղեալք .  
ետես զՎրիգորիոս , ետես զԵրեսէս և



զխաճակ, դարձաւ յԲարայր, ակնարկեաց և ՚ի Հացեկոյ, հայեցաւ և ՚ի Սեբաստիա... և եւ Սխիթար, եւ Սովսէս շղթայազերծ զԺողովուրդն առնել, եւ Ռեսեիլէ շինել զտաճար անուան բարձրելոյն, եւ Վեդէոն կառուցանել զսեղանս անմահին:

Ինչպէս քաղաքի քաղաքացի և յանկած տոհմէն մանուկ ծնաւ Սխիթար և որդի տուաւ Հայաստան աշխարհի մանուկ ոչ ըստ հասարակաստեղծ պայմանի բնութեանս, այլ յայնոցիկ զորս յորովայնէ ընտրեաց տէր և յարգանդէ մարցն սիրեաց, և յանտիական լանջս տխեղծ հասակին՝ զիւրոյ ամենահեշտ սիրոյն ելոյց զձա՛հ, սերմն դեղեցիկ յարդիւնարար երկրի արկեալ մանուկ յերջանիկ ընտրելոյն՝ զորս Բստուծոյ յառաջագէտ խնամք անդէն ՚ի սկզբնաբոյս հասակէն կարգեալ եղին առ տխուր ուռենեօք գետոցն Բաբելացոց, հառաչաճայն ողբովք անձուկ ունել վերինն Սիոնի: Վանգի սէրն Բստուծոյ զհասակ ոչ խտրէ, և յընտրեալսնորա՝ օրէնք բնութեան տեղի տան մտադիւր օրինացն շնորհաց: Բայն սէր եռանդուն որ ՚ի սքանչանս աշխարհի և ՚ի պարծանս Բարաւոյ զՍխիթար կարգեաց, անդստին ՚ի մանկութեան տիոցն վառեալ բորբոքէր զլանջս նորա. և ոտքն փափուկ և սիրտն եռանդուն, այլոյ իմն ճանապարհի ՚ի խնդիր ելեալ չըջէին. մանուկ մտավարժ և ոգւոյ բարւոյ դիպեալ, ցանկայր իմն զճիսութիւնս հաստատել յաղքատութեան, զհաճոյս ՚ի վշտագին տառապանս և ըզփառս յանարգութեան. և որովք նշուաստանալ կարծենմարդիկ, նովաւ բարձրաթուիչ խոյանալ. վասն որոյ տարօրինակ իմն մանկական հասակի խորհէր խորհուրդ, զծնելասէր գգուանսն արհամարհել զորդեսէր ծնողացն և զբարեկամացն գութ խանդաղատանաց, և զզարմանահրաշն հուր յանձին բորբոքեալ, որ զՍեծն անուպատի յանձաւս լերանց տարագիր աքսորէր, և զՍահարիէ խաղալիկ կարգէր ջուրցն բռնութեան, երթալ հանգչել ՚ի խորանս

սրբութեան, ՚ի ծոցն տէրունի. զի մի աշխարհ յափշտակեալ կապտեսցէ ՚ի նմանէ զծաղիկն առաքինութեան. երթայր անձաւամուտ լինել յալս մթինս և խաւարչուտս, զորս սէրն Բստուծոյ գիտէ միայն լուսաւոր առնել: Բայսպէս ահա աստուածային սիրոյն զարթնուին հրաշալիքն ՚ի սիրտ Սխիթարայ, որ այն ինչ սկսեալ կելոյ, փութով զմեռանէն ըղձանայր. որ քաջ իսկ խելամուտ լեալ գիտէր եթէ ինչ մի է ՚ի մարդումն որ խոնջն է և պարտասեալ, և յանձնդիր հանգիստ հակամէտ. ճանաչէր նա եթէ ՚ի մահազեկոյց թմբիր յօժարեալ է մարմին, և քթթեւ մի ական, մահանհրաժեշտ առեալ ածէ: Սէր երկայնամիտ պարգեւէին երկինք Սխիթարայ, և բեռինք աշխարհականք և շղթայք վարակիչք մարմնոյ և արեան, չէին նմա խոչընդոտն. սէր նորա բորբոքեալ ՚ի վերայ երկրի, և անդէն քան զծուխ դիզացեալ յերկինս ելանէր. ծնունդն ՚ի կորստականս գաւառի, և անմահականք կեանք նորա յերկինս: Բայց թէպէտ և շնորհք աւազանին զՍխիթար ընծայել կամէին Բստուծոյ, շնորհք աստուածեղէնք աշխարհի զՍխիթար պարգեւէին. մանուկն ՚ի քարանձաւս, և Բստուած ՚ի վերայ բարձու զճրագն կառուցանէր, Սխիթարայ զսիրտ իւր լուսաւոր առնել խորհեցեալ, և Բստուած ՚ի լուսոյ նորա զհայաստան կամէր պայծառացուցանել... Բայ, դարձիր Սխիթար յանձկակարօտ գիրկս ծնողաց քոյ. զի դու ինքն ես հրեշտակն Բնականին, և ըզհացն՝ որում դու յերկնից մնայիր, դու ջամբեսցես քաղցելոյ Ժողովրդեան. ըզճանապարհ ընդ որ իղձ լինէիր ընթառալ, դու բացցես կարկամելոյն և գօսացելոյ ոտից. և զայն սէր Բստուծոյ, զոր յանձին քում քաջափայլ ցուցանես, քան զմեղր խորիսխ՝ քաղցելոյն ՚ի յագուրդ լիութեան արկցես և անձկացելոյ: Եւ դիմեալ զայր անտի Սխիթար, զտուն ընտանեացն փոխել յանապատ. ոչ ՚ի հրոյն փախչել, այլ ՚ի հուր զանձն արկեալ, և մնալ անկէզ ցօղագին շնամբ



սիրոյն Մատուծոյ : Չեւն արկանէր նա 'ի պատերազմնն աստուածահաճոյ , յորում և մեռանել զլիսովին՝ կատարեալ յաղթութիւն է :

Այն օրն այր 'ի սրբոյն Մատուծոյ , յորժամ որ ծառայ տեսնու , ասէ , ցանկասցի լինել և յիմանալին տաճար սրբութեան մուտ գտանել , արժան է նմա առ սեմօք դրանցն մերկանալ յանձնէ զմարմին , զի հոգւովն և եթ 'ի տէրունեանն մտցէ 'ի տուն . քանզի բուն թշնամի է մարմինն Մատուծոյ , վասն որոյ և ընտրելոցն նորա այս ճիգն և ջան լինել , իբրև ընդ փնտսակարագունի թշնամոյ այնպէս խեթիւ ընդ նմա նայել . և առաքինակրօնս այս քաղաքաւարութիւն 'ի բոց հրոյ բազմութեան բռնաւորացն զբազմագոյնս 'ի քրիստոսախրատ աշակերտելոց արկանէր կամակար , զվկայիցն սրբոց զարիւն պատուական ընդ հող և ընդ փոշի խառնէր , և զսպալէր միայնութիւն անապատաց բերրի և արգասաւոր յարդարէր : Օնոյն ջան և Մխիթար առաքինանայր . ուրացեալ զմարմին և հոգւով յերկինս 'ի վեր ելանել . և կամզի այսպէս ասացից , զմարմինն խարուկել 'ի զոհ աստուածային սիրոյն , և ծխով նորին ելանել բարձրանալ յերկինս . ընդ առաքելոցն մեռանել աշխարհի , զի զքրիստոսեանն ընկալցի կեանս , և նովին պատանօքն պատիլ , որով տէրունին ամփոփեցաւ մարմին : Այլ ո՞ք բաւական իցէ այդմ , եթէ ոչ ինքն տէր դրոշմեցէ զայն սէր 'ի սիրտս մարդկեղէնս , և անարատ զոհս աստուածային սիրոյն գնոսալնձայեցուցէ . որոց ընդ ամենայն երկիր ընթացեալ , և ոչ ինչ այլ ընտիր գաղափար նմանութեան մարթասցին գտանել , քան զտէր : խիտու ամբարձեալ 'ի կառս խաչին , և ոչ այլ բարբառ լիցեն , բայց զձայն լին բարողութեան 'ի բարձրաւանդակէ անտի . որք խելամուտ լեալ գիտիցեն , զի և գեղածաղիկն թարշամեսցի մանկութիւն , և աւուրք կենաց մերոց առաւել քան զհաւատադրութ և զնենգաժոտ բարեկամ , հեռացեալ մեկնեսցին առ 'ի մէջն , և արդարու

թեամբ լոկով կամ անօրէն վարուք ելցուք առ այն յորմէ եղև մուտս մեր յաշխարհ . քանզի որ զմեզ աշխարհի կեցուցանէ , ոչ այլ ինչ է բայց վայրապար իմն միտութիւն հեշտութեանց աշխարհի , իսկ որ զաշխարհ մեզ կեցուցանէ , փայլ իմն է սնոտի , որ անլոյծ յողիք բեւեռեալ սնդէ զմեզ ընդ աշխարհի . . . Մէջ մի , խաբիս մահացող . յակն թութափել , հասանէ քեզ մահ , նա հուր է ծախիչ քոյոց յօժարութեանց , և խորշակ խամրագործ ծաղկանց աշխարհի . . . յեցիր յարդարութիւն և մի յաշխարհ , յեցիր 'ի վիշտս և մի 'ի փափկութիւն , յեցիր 'ի սէրն երկնային և մի 'ի սէր ընդունայնութեան յեցիր յ'ստուած և մի 'ի մարդիկ . տես զընտրելոցն գումար , տես և զիմն հայր զՄխիթար , որ ոչ յաշխարհ յեցեալ , և 'ի նմանէ քակեալ է աշխարհ , որ միով ձեռամբն քակէ ըզշղթայս վարակիչս , և զմիւսն առ այն կարկառէ , յորմէ ազատութիւն նմա չնորհեսցի : . . . Մյլ զի մեղաւ քեզ հայր , այդ մարմին , զոր ոչ այլ սէր գըրաւեաց և ոչ այլ բոց ծախեաց , քան զբոց և զսէրն աստուածային . — Մյն սէր , ազաղակէ նա , որ զ'ստուածն մարդացեալ յերկնից յերկիր էած , և 'ի Վագաթան խաչիւ անարգութեան զնա զրաւեաց . և այն բոց , որ աստուածահրաւէր վարդապետութեամբն՝ զանձուկն եցոյց անքոյթ արահետ հոգւոյ , և զկորստական լայն ճանապարհն մարմնոյ :

Ետ այնորիկ Մատուած զմաքուրն և զանբիծն հոգւով զՄխիթար , յասպարէզ առեալ ածէր առաքինակրօն նահատակութեանց , և առ 'ի զփառացն չնորհել նմա զսրակ , զփշեղէնն նախ և զխստըմբեր ածէր 'ի զլուխ նորա : Օքաժակն զոր տէրն ինքնին մատուցանէր , քամեաց յօժարամիտ . էարբ զսէրն երկնային և զմայլեցաւ , ընդ նմին և զարհամարհութիւն երկրաւոր . զխանդաղատանն ետես երկնից , ետես և զատելութիւն երկրածնաց . փարեցաւ ըզխաչիւ 'ի վերայ երկրի , այնպէս ելանել առ : խիտու : ( ) գնականութիւնք



չորհապառ լ'ստուծոյ առաւել քան զան ձրև արդիւնարար տեղալոց էին ՚ի գլուխ Սխիթարայ . այլ զի սաստիկ հոսանքն իցեն , արժան էր տխուր և մթազին ամպոցն կանխեալ խոնել կուտակել , հրեղէն կայծականց թօթափել և բուռն հողմոց շնչել . . . Սիրելին լ'ստուծոյ , տարփալին երկնից Սխիթար տուեալ յանարգանս և ՚ի հարուածս խստազինս , քանզի անջրպետ իմն հզօր է ընդ երկնիցն և երկրաւոր իշխանութիւն , և Վրիստոսի վկայիցն այլ իմն աստուածատուր զօրութիւն է , պարտութեանն քօղով զյաղթանակն ծածկել . սոցա պնդութիւն ՚ի վիշտս է և ՚ի հալածանս , և յերկրաւորիս լռել , երկնաւորն յաճախէ այցելութիւն : Վուք ընդ իմ , լերինք և դաշտք Հայաստանեայց , դուք նմանավիշտ որդւոցս զարտասուն պատմեցէք և զհառաչանաց հեկեկանս զմեծի նահատակին սիրոյ . աստեղք , մի լռէք և դուք զգիշերաջան վաստակն Սխիթարայ . ածէք , կացուցէք մեզ յանդիման զՍխիթար տապախարշ , արևակէզ , ցրտասարսուռ , հիւանդագին և տկարացեալ . . . Մհ , եթէ անտեղեակս ումանս զձեզ տիրահրաւէր հանդիսից նահատակութեան հօրն մերոյ կարծէի , արժան էր ինձ քան ըզդրուատեաց բանս , արտասուս յորդահոս հեղեալս առնել առաջի ժողովոյս . արժան էր ինձ առաւել քան զհին ծերունին խորնոյ ողբալ զաղէտս ազգիս ՚ի վարդապետս և ՚ի ժառանգաւորս . արժան էր ինձ զաստուածապատգամ գրոցն առնել առաջի զկշտամբութեան բանս , եթէ բնաւ իսկ ընդէր հրկէզ առնէք զտէրունեանն այգի . . . Ղայց աստուածեղէն տեսչութեանն խնամք էին այսոքիկ . զի Սխիթար վարժեարս կառուցէ դպրութեանց , պարտ էր զի փակեսցին նմա վարդապետացն դրունք , և նախ քան զգիրս բազմապատիկս սփռել կարօտելոյ ազգին , արժան էր զմատենիկսն իսկ և զթղթեանն ՚ի նմանէ կապտել . առ ՚ի զայլոցն հարու ըզպասուք , Սխիթարայ հարկ էր ծարաւել , իւրով արտասուօքն զնոցա արտա-

սուս բառնալ , և անձինն հեկեկանօք զնոցա բերանս լռեցուցանել յողբոց : լ'ստանօր զՍխիթար իբրև զհնոց վրկայիցն խուճս ՚ի յաղթական ասպարիզի նկատեմ . արիւն հեղոյր նա , ոչ զօրսուրն խոցոտէր բռնաւորաց , այլ սուսեր սիրոյն լ'ստուծոյ և ընկերին . հեղոյր և զարտասուս , զարիւն հոգւոյն : Տեսէք աւարիկ , ուսուցիչ դորա է և վարդապետ , որ յանցս ճանապարհաց անխնամ անողք և անօգնական թողու զնա ՚ի ցրտասարսուռ ձմերանի . դաստիարակ Սխիթարայ է , որ յայգեստանեայս և յանդս զնա չարատանջ տառապեցուցանէ . բարեկամ Սխիթարայ է որ զբազմամեայ քրտունս վաստակոց նորա , ՚ի մի ծուխ բոցոյ յաճին լուծանէ . . . Ղայց Սխիթար ինչ ոչ դրդուէր յաստուածահաճոյ ջանիցն . նա մանաւանդ դոյզն ինչ զայնոսիկ համարեալ , անձամբ անձին թշնամիս գրգռէր . զանձն իւր ընդդէմ անձին յարուցանէր . ատելութիւն նախանձաբեկ զնոսա ընդդէմ երջանկին յարուցանէր , և այլ ատելութիւն փրկական զընտրեալն լ'ստուծոյ յանձնանուէր մարտ յորդորէր : Սյաղթութիւն անզուգական , յորում հալածողն և հալածեալ միանգամայն սիրելիք են լ'ստուծոյ . յորում լ'ստուած միով ձեռամբ սրտապնդէ զմարտադիրն և միւսովն զնա պսակէ :

Ղայց յորժամ խորտակեալ քակեսցին խորհուրդք մարդկեղէնք , և յերկիր օգնականութիւնն նոցա տապալեսցի , յայնժամ աստուածեղէնն զլուխ ՚ի վեր ամբառնայ , որ բազում այն է զի և ըզյոյս անգամ կործան արկանէ , յորժամ զբովանդակն իւրոց ձեռացն արգասիս ցուցանել կամիցի : Եւ կարի իսկ քաջ զի ոչ մարդ էր որ զՍխիթար յարոց կանգնեաց ՚ի պարծանս Հայաստանեայց , այլ աջ անեղին բարձր և զօրաւոր . վասն որոյ և նմա միայն ՚ի դէպ էր ձեռնտուութեանն , զի մի մարդ յափը տակիչ աստուածային փառացն լեալ ՚ի ներքս սպրդեալ մտանիցէ : — Ղամ մի դարձուցէք աղաչեմ զայս ՚ի վշտալարչարն Սխիթար , և տեսէք զնա ՚ի սրբ-



բանուէր առանձնութեան տեառնաբնակ տաճարին 'ի Սեւան . աս, եթէ ուրեք երբէք պարտասեալ և խոնջ եցոյց զանձն Սխիթար , միայն առաջի ամենագէտ աչացն համարձակեցաւ մերկանալ զաղէտս սրտին : Յարեմտից մինչև յարեւելս ընթացեալ , 'ի ծագաց հայաստանեայց մինչև 'ի ծագս նորա 'ի խնդիր տէրունեան ճանապարհին , և վրէպ յիւրոց ըղձիցն գտանէր . վասն որոյ զաչս առ այն պիշ ունէր Տիրուհի , որոյ կամք ոչ ինչ ընդհատ յաստուածային կամացն են : Ս'վ գիշեր զարմանահրաշ , յորում երկունքն լինէին աստուածահիմն ուխտիս , յորում ընդ ցաւոցն՝ խնդութեան արտասուք քան ըզգարնանափթիթ վարդս ծաղկէին յայտոս մերոյ նախահօրն , յորում և Տիրուհւոյն աջ յերկնից լուսալիր յարկացն յօժանդակութիւն իջանէր աստուածազդեցիկ ջանիցն Սխիթարայ : Այ , հաւաչէ ոչ զիւր ինչ աղէտս , այլ զհամաճարակ թշուառութիւն հայաստանազգաց . Սարգիսեղէնքն լռեցին , ասէ , օգնակա նութիւնք . պարտասեցան և ջանք ծառայի քոյ , Տիրուհի . բեռինքն թեթեւք և փոքրոգիք , զորս 'ի վերայ բազկաց իմոց եղեր , ծանրացան 'ի վերայ իմ , և բքան ձեռք զորս դու զօրացուցեր . աս, եթէ սիրեցեր զիս , եթէ երբէք հաճոյ եղէ յաչս քո , և զայս սէր ցոյց ընդ իս . զաւանդ հոգւոյս ան ընկալ յերանաւէտ կայանս արդարոցն , գէթ անգէն հանդիպեցայց որում չեղէ գամագիւտ 'ի վերայ երկրի . գէթ յայնժամ լռեսցեն արտասուքս , լռեսցեն և հեծեծանքս . . .

Ա՛հ , հոգեակ գետնամածեալ , յոտն կաց , արի 'ի վեր . զայն շունչ լռեցուցանել կամիս , որ կենդանի արասցէ ըզբովանդակ տուն հայրենեաց քոյ . ըզձայնն որ ընդ ոլորտս երկրի հնչեաց .

Ա՛հ , եթէ դու անկանիս մեռեալ , անյարիր կոլիցէ և երկիրս մեր հայրենի . և որ քեզ փառս նիւթէ , այն մեզ յանարգութիւն դարձցի . հայա , ել կանգնեաց յոտին , և վիշտք քո քեզ և մեզ միանգամայն լիցին 'ի պարծանս . 'ի գլուխ ասպարիզին և ոչ 'ի սկիզբն կարգեաց

Ստուած զպսակն փառաց հանդիսադիր նահատակութեան մրցանացդ . և և քուն իմն աստուածութեան , բայց առաւել զօրութեամբ է զարթնուն . և անքուն վրէժինդրութիւնն բաղումայն է զիյետ Մքելի անպարտական մահուն բարձրագոյ աղաղակէ . . .

Ստասուք էին , զորս 'ի յարկս սրբութեան տաճարին Սեւանայ հեղոյր Սխիթար . և երկնից արգոյ քաղաքակիցքն Սրիգորեանք և Սերսիսեանք , բարձրելոյ տեառն նուէր սիրալիր հանէին . զարտասուս՝ որք զմերն սրբելոյ էին և զբովանդակ տանն Սրամայ . . .

Ա՛հ , շատ իսկ խանդաղատեցան երկինք 'ի վերայ քո , Սխիթար . արտասուք քո և հեծութիւնք ելին բարձրացան առաջի Ստուծոյ , զսչոյ յերկիր կորակոր պըշուցեալս ամբարձ 'ի վեր , տես զի ցեւան երկինք . . .

Բաբէ , զինչ տեսիլ իցէ այս . Սարեկեանն անկեալ կայ հրեշտակ յաստուածընկալ յարկս տաճարին Սեւանայ , և այցարար նմա գանձարանն աստուածային շնորհաց իջանէ , իջանէ Տիրամայրն . մայրն գթած գայ փարիլ զօրդւոյն , մխիթարել զնա և բւփոփել . . .

Սրասուր և ցնծութիւն , հըրձուանք և երկիւղ , յոյս և տագնապ յափշտակեն իմն զմիտս Սխիթարայ և զսիրտ : —

Այլ ուստի քեզ երկիւղ . Տիրամայրն է դա և քո գորովալիր , ընդէր զանգիտես . յոյս է նա ամենեցուն , ընդէր լռեալ կաս և դադարես . քաղցրախորժ իմն ժպիտ 'ի դէմն նորա , դու ընդէր արտասուես . նա առ քեզ մօտի , դու ընդէր 'ի նմանէ հեռացեալ փախչիս . . .

Այլ եթէ ոչ մեծ էր խոնարհութիւնն 'ի Սխիթար , ոչ արդեօք մեծ լինէր և սէրն երկնային : Իսկ Տիրուհին առաւել քան զմայր գորովազութ որ ընդ վիշտս սիրեցելոյ որդւոյն չհանդուրժեալ , ոչ միայն զարտասուսն սրբիցէ , այլ և զձեռն յօգնականութիւն նմա կարկառեացէ , մերձեցաւ առ նա , ետես զսիրելին անկեալ առ ոտս , ետես զարտասուսն թացեալս , հայեցաւ յերեսն ցաւազինս , եհարց սիրալիր եթէ — Սխիթար զինչ խնդրես : —



ԼՆՏ, անսպասուած են և անչափ պարզե-  
քըս . փարեաց , հայր , զոտիւք դշխոյին  
երկնից , խնդրեալի նմանէ գթո և զմեր  
կեանս . խնդրեալ զաննկուն շնորհ և  
զանրնկճելի հաստատութիւն . խըն-  
դրեալ մեզ անքոյթ ապաւինութիւն 'ի  
ծոցն մայրենի , արկ զմեզ ընդ դրօշա-  
կաւ գթասէր Տիրուհւոյն . թող կու-  
տեսցին խոնեսցին զմեզ վիշտք նեղու-  
թեանց և անձկութեանց . մեր օգնու-  
թիւն 'ի քէն լիցի , Տիրամայր , մեր  
վիշտք և նեղութիւնք պարգեւք իցեն 'ի  
քոց առատազեղ ձեռացն հասեալք : —  
Լուեաց Սխիթար , յահի յերկիւղի  
լեալ մի արդեօք զայն : խնդրիցէ որ օ-  
տարն իցէ յ'ստուծոյ կամաց . Տիրու-  
հին զկամս հարցանէր զոր յանձնէ մեր-  
կացաւ Սխիթար . և զի անբաժան ու-  
նէր զկամս յաստուածայնոցն , ոչ ինչ  
աւելի խնդրեաց քան զոր երկինք և  
Տիրամայրն կամիցին . “Օայն կամիմ,  
ասէ , զոր ինչ դու կամիս” . — խըն-  
դրեաց և ոչ ինչ , և միանգամայն զամե-  
նայն խնդրեաց . և զԼիդիցին ըղձաձայ-  
նեալ Տիրուհւոյն , ելանէր բարձրանայր  
յերկինս . զաստուածային շնորհացն  
գանձարան 'ի Սխիթար հեղեալ , և  
զսիրտ նորա և զկամս ընդ իւր յերկինս  
վերացուցեալ . զՍխիթար՝ յարտա-  
սուացն հովտի թողեալ , և զառաջար-  
կութիւնն յերկինս օրհնաբանեալ :

Բայց որ խաչելեալ փրկչին հետեող  
աստուածուսոյց խրատուցն իցէ , և ըզ-  
սէրն երկնային յանապական կողէնքա-  
մեալ , արժան է նմա 'ի վերայ խաչի  
վշտաց և նեղութեանց մեռանել , և  
ապա թէ փոխանակ բամբասանաց և  
հայհոյութեան լուտանացն զճշմարիտն  
ընդունել վկայութիւն , ոչ զոր կիրք  
թելադրեն նախանձու և ատելութեան ,  
այլ խայթ խղճի մտաց : Ի նոյն պսա-  
կահամբար կէտ և զՍխիթար սահ-  
մանեցին երկինք . խոստանայ նմա Տի-  
րամայրն օգնական 'ի վիշտս լինել և  
կամակատար , և զի զձեռն ցուցցէ բար-  
ձրը և զօրաւոր , նա ինքն գրգռէ իմն և  
այլ բազմապատիկ թշնամիս 'ի վերայ  
նորա յարուցանէ . զի 'ի նոյա բազմու-

թեան՝ մեծ և յաղթանակին լինիցին  
փառքն . զերկինս ցուցանէ նմա 'ի զօրա-  
վիգն , և զերկիր աջակից երկնից , թէ  
պէտ և հակառակամարտ իմն ընթա-  
ցիւք . զխորանսն բանայ լուսեղէնս , դար-  
ձեալ և զալս ներքինս սանդարամետա-  
կանս , զի 'ի յետնոցս ամաչել , երկինք  
փառօք ցնծասցեն . իբրև զնոր ոմն համ-  
բերողաց նախատիպ 'ի վերայ աղբւաց  
երկրի գնա տարածանէ , մայր և քոյր  
ցուցանէ նմա զերր անարգութեան , և  
յերկնից աստուածախրախոյս ձայնի  
գնա քաջալերէ : Լյս օրէնք են եր-  
կնից օժանդակութեանն , քանզի և մի  
և եթ ձեռք աստուածեղէն շատ իսկ են  
'ի փրկութիւն :

Եւ զիմորդ ոչ ընդհակառակս իմն  
խոստմունք աւետեացն թուեսցին՝ Սխի-  
թարայ լոյս լինել խաւարելոյ , ուր  
մշտագիշեր մթութիւն ածէին երկինք  
զարտեանամբք նորա , փակելով և ըզ-  
մուտս անգամ տաճարացն Ստուծոյ ,  
որք սիրելիքն էին նմա քան զամենայն  
յարկս մեղաւորաց . զիմորդ և ընդ միտ  
անգամ ածցէ որ եթէ նա զբեկումն  
բարձցէ Հայաստան ժողովրդոց , ուր  
ինքն հիւանդագին անկեալ տապախառն  
ջերմամբ , չարատանջ վշտօք , ցաւալից  
պանդխտութեամբ . ո՞ իցէ որ զՍխի-  
թար առ դրունս տեսեալ գերեզմանի ,  
և շունչ գնա հաւատասցէ կենդանա-  
րար անզգայելոցն սրտից : — ԼՆՏ , և իմ  
իսկ աստէն 'ի հիացումն աղաղակ սրբ-  
տիս ընթանայ , և ընդ մեծի ուրումն  
եկեղեցւոյ մտերմի գոչեմ . “Իբրեւ  
զի գեղեցիկ տեսիլ է Ստուծոյ , զայլ  
քրիստոնեայ տեսանել որ ընդ ցաւոց  
ոգորիցի , սպառնալեաց և տանջանաց  
դիմագրաւ ախոյան արձանասցի , և ժը-  
միտս 'ի դէմն այնպէս խնդութեամբ  
'ի վերայ շառաչելոյ մահուն յարձակես-  
ցի և արհաւրաց դահճի , Ստուծոյ  
միայնոյ տուեալ տեղի ” . յիշեմ և զու-  
րումն յարտաբնոց ուղղախոհ իմաստա-  
սիրացն ասել , եթէ “Զիք ինչ առա-

1 Սխիթարի փեղեքս , յԱպարանութեան մա-  
տենին :



ւել հաճոյ Մտուծոյ, բայց զայր տե-  
սանել բարեբաղդիկ, որ դժուարամարտ  
անհնարին վշտացն յաղթական համբե-  
րատար ժուժկալութեամբն հանդիսաւ  
ցի, 1: Վանգի զայս անհրաժեշտ իմն  
օրէնս 'ի նախախնամութեանն նկա-  
տեմ. զԱբրահամ ընդ սիրեցելոյ որ-  
դւոյն 'ի կատարն հանել զոհարան լե-  
րին, և անդէն զօրդեսպան ձեռին ըզ-  
հարուածն արգելու. զՀովսէփ մինչև  
'ի դրունս մահու առեալ ածել, և 'ի  
բանտէ վշտաց և ցաւոց յարքունական  
վերառնուլ փառս. զԱռիստէս թիւրախ  
'ի մէջ արձանացուցեալ զայրացելոյ ժո-  
ղովորեան, յորժամ քարինս 'ի ձեռն ա-  
ռեալ 'ի վերայ արշաւիցեն, յայնժամ  
ապա ծածկոյթ զամսն ածել 'ի վերայ. զԱխիթար մինչև 'ի ծագս գահալէժ  
ապառաժի վշտաց առեալ ածել, և յետ  
այնորիկ ապա յետս ընդ կրունկն դար-  
ձուցանել. որ Մտուծոյ լոկոյ ամենազօր  
ձեռացն արգասիք են սքանչելարուեստ. 1  
Վանգի և Ախիթար ոչ 'ի փառս ինչ  
անձին իւրոյ, այլ 'ի յաճախութիւն Մ-  
տուծոյ փառացն քրտնալիր վաստակե-  
ցաւ. զի ո՞ զնա անոք և անաէրունչ 'ի  
կիրարացուցն թողոյր լքանէր կղզւոյ,  
եթէ սէրն ճմարտութեան ոչ էր վա-  
ռեալ զլանջս նորա, և զընդդիմամար-  
տիցն գումար ամաչեցուցեալ. ո՞ զնա  
պանդուխտ նժդեհութեամբ քաղաքաց  
'ի քաղաքս առեալ ածէր, եթէ ոչ փառք  
աստուածայինք. ո՞ յարգելական խրց-  
կունս իբրև 'ի պահեստի զնա արկա-  
նէր, բայց հուր սիրոյն Մտուծոյ և  
ընկերին. քանզի քաջ իսկ զփորձ ա-  
ռեալ գիտէր Ախիթար, եթէ որք սեր-  
մանէնն՝ արտասուօք սերմանեն, բարե-  
բաստիկ աւուր հնձոցն զխնդութիւնն  
պահեալ. վասն որոյ իբրև զնոր ոմն հայր  
հաւատոց յուսայր ընդդէմ յուսոյն, գի-  
տելով չափ եթէ ճանապարհք իմն գաղ-  
տնածածուկք են Մտուծոյ, և որ մեզ  
հեռաւորն թուիցի օգնականութիւն  
երկնից, բազում այն է զի մօտ առ մեզ  
կայ, սիրալիր բարբառովն զմեզ սրտա-

պինդ քաջալերելով. քանզի հաւատա-  
րիմ է Մտուած առ որս հաւատարիմքն  
իցեն առ նա:

Նարատին Ախիթարայ անբաժ էր  
հոգին յընդունայնութեան խորհրդոյն,  
որք զայլոցն 'ի մարդկանէ յափշտակեալ  
զրաւեն զսիրտս. 3: Եթէ 'ի դէպ հաւա-  
րիմ ես ասել, եթէ առ 'ի ներբողել  
զԱխիթար արժան է 'ի սիրտ իսկ նորա  
մուտ գտեալ, յայտ յանդիման նկատել  
անդէն զհուր սիրոյն Մտուծոյ, զհրեշ-  
տակատիսն աստուածանուէր մաքրու-  
թիւն, և առաւել զխոնարհութիւնն  
սքանչելի. անհ, զիտէր նա քաջ եթէ  
բարձր է Մտուած. բայց խոնարհաց  
և եթէ և ոչ բարձրացելոց մարթ է յա-  
թուն մատչել բարձրութեան, և փառքն  
եթէ ոչ 'ի վերայ հիմանն խոնարհու-  
թեան ամրացեալք իցեն, վաղվաղակի  
կործան անկանին յերկիր... 1: մեծ  
բարձ տիրահրաւէր օծութեան յա-  
ռաջ կոչեն զԱխիթար. այլ քանի  
տարօրինակ են խորհուրդք ընտրելոցն  
Մտուծոյ. 2: Եւ իշխիցեմ զիսոյ, գո-  
չէ նա սրտալիր, երանել բարձրանալ  
յայն աթու, որ ոչ ինչ գիտեմ զանձնէ  
իմմէ բարութեան, 3: Վահանայականն  
չնորհ գողցես զձեռն առ Ախիթար  
պարզեալ ձգէր, իբրու յիւր 'ի միակ  
պարծանս. և քերովլէն հողեղէն յա-  
նուանէ իսկ նորին սարսեալ տագնա-  
պէր... 4: Բայց սէր Մտուծոյ յաղ-  
թէր անձնանախատ խոնարհութեանն  
Ախիթարայ. այնուհետև Ախիթար  
յերկրի դեգերեալ, և գլուխ նորա  
յամպս. զսիրտ և զաչա առ Մտուած  
ուղղեալ, և զձեռն 'ի վերայ ժողովուր-  
դեան. առաւել քան զՄարութն մեղ-  
միչ աստուածեղէն արդարադատ բար-  
կութեան, ոչ խնկանուէր բուրվառաւ,  
այլ խաչուն յաղթանակեալ. զերկինս  
և զերկիր միանգամայն հրձուեցուցեալ.  
զգժոխըմբեր մաղձ ատելութեան 'ի  
սէրն փոխեալ երկնային, և փոխանակ  
թշնամանադիր բանիցն՝ զիրկնդխառն  
անձնահամբոյր կցորդութիւնք... 5: Իսկ  
Ախիթար զինչ... 6: Մահ, սարսուռ յե-  
րակունս իմ խաղայ. Ախիթար հրեշ-

1 Սենեկա, հռովմայիցի իմաստասէր:



տակ խաղաղութեան յո գիմեալ երթաւ . հայր հայրենեաց , և ուր տարագիր մեկնեսցիս . “այր այդպիսի ծընեալ ի փրկել զհայրենիս տարաշխարհիկ մեռանիցի . բարերարին հայրենեաց զլասցի հողն գերեզմանի . . . Եւրանի տամ ես վայրացն որ ընդունին զնա . . . հէգ և թշուառական է քաղաք որ զնա ի բաց վարէ , , Եւ , որդիք Եւրամեանք , անկենդանք ինձ թուէիք և մեռեալք , և ահա տեսանեմ զի դեռ ևս շունչ գոյ ի ձեզ , դեռ ևս խարուկէ զսիրտս ձեր բոցն ատելութեան և միմըռեալ նախանձու . դեռ ևս տեսանեմ զձեզ զի զընդունայնութեան զհետ երթայք , որով երբեմն յանէծս ցաւագինս և ի մշտագիշեր արտասուս զձեր բարեխնամ հարսն յորդորեցէք , որք ըզթարգմանիչն երանաշնորհս թափառական ընդ օտար աստեղքք նժդեհացուցէք , որ կոյր և մոլորեալ զՆիւրիգորիոս դանդաչեցէք զանմարմին հրեշտակն . որով տապաստ յերկիր զարքունականն արկէք զաւազան , արկանէիք իմն և զքահանայութեանն եթէ թուղեալ էր ձեզ Եւտոծոյ . և արդ հիմ փախստական զիմ հայրն տանիք . ալիք փրփրացեալք , ահ , գէթ դուք գթութեամբ ակնարկեսցիք ի հայրենին աշխարհ . հողմունք մի ցողագին շնչիցէք զի մի Եւսիթար ի մէնջ հեռասցի . մեք անգէտք և անտեղեակք մերոյ բարելաութեան , դուք զմեզ կշտամբեցէք . . . Եւ յիսն ինձ , սրացան մկանունքն , շնչեցին հողմք , առին տարան զԵւսիթար , յափշտակեցաւ ի մէնջ արդարն , զի զուր զհետ նորա ձայն արկեալ գոչիցեմ :

( ԱՒԱՐՏՆ ՅԱՌԱՋԻԿԱՅՍ )

## ԲԱՆԱՍՒՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԱՌՈՒԹԻՒՆ

Եւր Գրնո-աժ Գրնո-նի-ն Դ :

Եւ տարուան ապրիլ ամսոյն վերջերը Օսրուցգետին յատակը փորելու ատեն , որն որ Կալիցիայի Բոտոլիայն Բուսաց Բոտոլիայէն կը բաժնէ , խիստ հետաքրքրական բան մը գտնուեր է : Եւ գետիս ան մասին մէջէն , որ Եւսցըր վի գեղին անմիջապէս վարերը կ'իյնայ , քարէ վիթխարի արձան մը ելեր է , զորն որ անմիջապէս գետէն դուրս հաներ են : Եւ արձանիս բարձրութիւնն է վեց մեդր , և չորս գլուխ ունի , որոնք ծոծրակէն իրարու հետ կպած են . և ինչպէս որ հնագէտներուն կ'երեւայ՝ Սվանդովիգի արձանը պիտի ըլլայ , որ Սլաւեան հին ժողովրդոց մեծ կուռքերէն մէկն էր : Եւ թէպէտ գրեթէ հազար տարիի մօտ ջրին մէջ մնացեր է , բայց ի վերայ այս ամենայնի ամենակին փնաս մը կրած չէ : Եւ իսկ թէ կուսուած կ'երեւնան իրեն ձեռքի աղեղը և եղջիւրը , որոնց առջինը պէտք էր որ աջ ձեռքը բռնած ըլլար , իսկ երկրորդը ձախ ձեռքը :

Եւ չորս անմորուս գլուխներուն ալ մնալը գանգուր է ու երկայն խոպոպիկներով , ինչուան իրենց երեսին վրայ կ'իջնայ : Բանուածքը շատ աղւոր է , և ըստ բաւականին դուրս կը ցատքեցընէ երիտասարդական անվախ կտրձութիւն մը , որ այն չաստուծոյն յատուկ բնաւորութիւնն էր : Սվանդովիգ հին Սլաւներուն պատգամատուն էր : Պատերազմ մը սկսելէն կամ հարկաւոր բանի մը ձեռք զարնելէն առաջ՝ իրեն խորհուրդ կը հարցընէին , ու անոր ի պատիւ ճերմակ գեղեցիկ մատակախազ ձի մը իրեն կը նուիրէին : Պատգամ մը չհարցուցած՝ նախ իրեն ընծայուած ձին դէպ ի նպատակ մը կը վազցընէին . թէ որ ձին նպատակին աջ ոտքովը